

Ամբաստանապետ
Խմբագրութիւն «Փիւնիկ», ի
Ազեմսանդրիա



S. Buzat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

ՂԵ.Ս.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

ՅՐ.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ՓԻՒՆԻԿ

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԻՆԻԿ Է
Ձեռագիր եւ չ'գար
անիւր

Կը ծախուի ՄԷԿ ղրուե քղքի

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6
Ազդեր կ'ընդունե-
ունիմ մասնաւոր
պայմաններով:

ՃԱՐԱՐԱՐԵՐՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

28 ՄԱՐՏ 1903

ԹԻԻ 31

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

ԼՈՒԾՈՒՆԵՑԱԻ

Այն, լուծուեցաւ այն, Ազեք-
սանդրիոյ Թաւ. Խնամակալութիւնը:

Այն գեղեցիկ լուրը կ'սպասուէր
մեր օրինասէր հասարակութեան կող-
մէն, որ զգուանքով դիտեց Մեծ Գայ-
թակալութիւնը, այն է Սահմանադրու-
թեան բռնաբարութիւնը:

Կամայականութիւնը գրաւ այս
խախտու չէնքին հիմը, նոյն կամայա-
կանութիւնն է ահա՛ որ կը քանդէ
զայն:

Ա՛լ գաղտնիք չէ՛, լուծուեցաւ
խնամակալութիւնը, որ արդէն կազ-
մուած օրէն ի վեր լուծուած էր օ-
րէնքին առջև. օրէնքին, որ բռնա-
բարութեցաւ:

Այս բռնաբարութիւնն զէմբարձ-
րացաւ ձայնը, ժողովուրդին հաւաքա-
կան կամքին ընդվզումը, անհատի

կամքին, կամայականութեան դէմ:

«Անկցի՛ Խնամակալութիւնը», այս
եղաւ այդարար ազազակը, որով
թարգմանուեցաւ ժողովուրդին դիտա-
կից մասին արդար զայրոյթը:

«Կեցցէ՛ Խնամակալութիւնը» պոռչ-
տացին քանի մը վարձկան մունետիկ-
ներ, հաւաքուած արմաւենիին տակ,
որուն սասերը միայն կը պակսէին «ով-
սաննա՛» պոռագողներուն ձեռքին մէջ,
զենիթը հասցընելու համար այն Մա-
յիս 18ի կիրակի օրուան խեղկատա-
կութիւնը...

Յոյց, Միթինկ, դիմումներ առեան
միջոց ի գործ դրուեցաւ օրէնքը յար-
դել տալու համար հոս:

Սակայն, կամայականութիւնը յազ-
թեց, ժողովուրդին ընարածները —
չատ քիչ բացառութեամբ —, ծաղ-
րեցին քուէները, խնդացին ընարող-
ներու քիթին, պաշտօնին մեծամուլու-
թեանը զոհեցին ժողովրդականութիւ-
նը, զոր անիրաւաբար կը վայելէին:

Մեր նպատակէն դուրս է սակայն
ծանրանալ անցեալի վրայ. այժմեու-
թեան նայի՛նք:

Այժմէութիւնն է լուծումը Խնա-
մակալութեան, քայքայումը, փլու-
զումը խախուտ շէնքին, որ արատ մը,
վէրք մըն էր մեր Աղեքսանդրիոյ
ճակտին:

Անկանոն կազմութենէ մը կարե-
լի չէր սպասել այսքան կանոնաւոր
կազմալուծում:

Առաջին հրատարուը Տիար Գրի-
գոր Մելքոնեան, որ աւելի պարկեշտ
ու խելացի գործ մ'ըրած պիտի ըլ-
լար, եթէ սկիզբէն ոտքը դրած չ'ըլ-
լար գունէն ներսը սենեկին, որուն
աթոռները չ'էին իրեն համար և պի-
տի բնականաբար վիրաւորէին իր ...
յետոյքը:

Տիար Մելքոնեանին հրատարու-
կանը բուն մը չէր, Պօլոս բաշայինը
տարսեցուց շէնքը, ոչ արդէն խախուտ,
տատանել սկսաւ:

Մէհրան խան Գալֆաեանի հրա-
տարականը, միանալով Տիար Գառնիկ
Չպուգճեանի հրատարականին հետ,
եկաւ վերջին հարուածը տալ:

Ու մնաց Խնամակալութիւնը մը-
այն երեք անդամներով, որոնց եր-
կուքը Միքայէլ ու Սվազը պէյերը —
Պօլոս բաշային կարգածներն են և ու-
րոնք, դեռ կը շարունակեն — չ'ենք
գիտեր ինչպէս — ներկայ գտնուիլ
նիստերու, ու պահել իրենց աթոռ-
ները...

Երանելի Եգիպտոսի Առաջնորդին
կը հարցընէ Խնամակալութեան հա-
ցորդ մտալ թէ՛ ինչ պէտք է ընել,
իրողութեան առջև: անդամներէն չոր-
սը հրատարալ, երեքը միայն մնացած,
ի՞նչ պէտք է ընել:


Ենորհալի Այվազեան շնորհքով
մը կը ծալէ հաբուումը, կը ծրարէ ու
կը զրկէ Պոլոս Պատրիարքարանը, ու,
կը խնդրէ որ, եթէ կարելի է (°) ե-
ւէքով շարունակուի Խնամակալու-
թիւնը...: Այնքան կը դողայ ինք ու
իր մազդիկը Սահմանադրական ընտ-
րութիւններէն:

Բայց թո՛ղ չը դողայ Այվազեան
Եպիսկոպոսը, թո՛ղ չը յուզուին Խնա-
մակալութեան մնացորդ անդամները:
Վստահ թո՛ղ ըլլան, Աղեքսանդրիոյ
հաստրակութիւնը, այն մասը գոնէ,
որ, շատ լաւ գիտէ Սահմանադրու-
թեան սկզբունքները, պիտի չ'ուզէ
մասնակցիլ ընտրութեանց, պիտի չը
քուէարկէ, լսի Թաղական Խորհուրդի
մը համար: Իսկ մամուլը, գիտնալով
ու համոզուած ըլլալով թէ՛ ամեն շար-
եաց աղբիւրը մեր Աղեքսանդրիոյ մէջ
աղգային իշխանութեան ապօրինաւոր
կազմութիւնն է, թէ՛ կամայականու-
թիւնը միշտ յաջողած է տապալել օ-
րէնքով կառուցուածը, պիտի ջանայ
ժողովուրդը լուսաւորել: Աղեքսան-
դրիոյ մէջ Սահմանադրութեան գոր-
ծադրութիւնը ձեռք բերելու միակ
պայմանն է ճշգեւ նախ՝ Աղեքսանդրիոյ
գիրքը հանդէպ Պոլոս Ազգ. Պատրի-
արքարանին, գիտնալ պէտք է թէ Ա-
ղեքսանդրեան չը կրնար կապուած
մնալ Գահիրէի ու կախում ունենալ
անկէ. ասիկայ վիճաբանութիւն չը
վերցընուի:

(Շարունակելի)

Փիւնիկի Տնօրէնը Գահիրէ պիտի մեկ-
նի ամսագլխուն գանձումներու համար:

ՁեթՈՒՆԻ ընկերութեան կանոնա-
գիրը խմբագրուած է արդէն և պիտի
քննութեան բովէն անցնի յատուկ
Յանձնաժողովի մ'առջև, որ պիտի
գումարուի վաղը, կիրակի, Մարտ 29,
ցերեկը ժամը Չին, Գեր. 4. Բարթո-
ղիմէոս Թագաճեանի սենեակին մէջ
ու իր նախագահութեան տակ: Յանձ-
նաժողովին քննութենէն ետքը կանո-
նագիրը պիտի ենթարկուի վիճաբա-
նութեան ՁեթՈՒՆԻ Ընկերութեան
Ընդհ. Ժողովին մէջ, որ առաջիկայ
չաբաթ պէտք է գումարուի:



ՎԵՐՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԸ

Յուշասիրտ

Տիկին Սարենիկի յիշատակին

(Շաբ. 30 քիւ.էն եւ վերջ)

Գահիրէ 16 Փետր. 1903

Ո՛րքան երջանիկ եմ: Այսօր նո-
րէն գացի տիկնոջ քով: Պատշգամին վրայ
արևը նստած էր, հանդարտ ու ժպտուն:

Նորէն եկար, ըսաւ, խնդալով և
գոհ, այս ո՛րքան կը սիրես եղեր զիս,
տղա՛ս: Այո, որքան կը սիրեմ եղեր
քեզ, որքան կը սիրենք քեզ, հիմա,
հիմա կ'զգանք, հիմա որ քեզ կորսնցը-
նելու շար կասկածը կրծել կ'սկսը մեր
սիրտերը: Բայց ո՛չ այսօր շատ լաւ էր,
շատ, շատ լաւ, շատ աւելի քիչ կը
հազար, աւելի հանգիստ կրնար խօսիլ,
կը ժպտէր, կատակներ կ'ընէր:

Ձուարթ նիւթեր եկան միտքս,
խօսեցայ. Ան իր աչքերովը կը պա-
տոտխանէր աւելի: Ա՛խ, նոյն կրակ
աչքերը, անո՛նք միայն չէին փրի-
ուած, անո՛նց միայն ինայսժ էր հիւ-
ժախտը:

«Տղա՛ս, ըսաւ, դուն որ երիտա-
տարդ ես, փոխանակ հոս գալու ինչո՞ւ
պտտելու, զուարճանալու չի գացիր
այս աղւոր օգին»: «Ես, տաղտկալի
եմ հիմա», յարեց տխուր ժպիտով մը:
Ա՛խ, այդ ժպիտին չափ տխուր, սրտա-
ճրմիկ բան մը տեսած չ'եմ երբէք:

«Ի՛նչ կ'ըլէք, Տիկին, չէ՞ մի որ
միշտ դուք էք, մանաւանդ ինձի հա-
մար»: «Ես, այո, ես,» պատասխանեց
գլուխը շարժելով և մնացածը կոր-
սուեցաւ հագի մը մէջ...:

Իր քոյրերուն, զուակներուն, սի-
րելիներուն մասին խօսեցաւ այսօր ա-
ռաջին անգամ: «Քրեցի որ, ըսաւ, զիս

չի մտածեն, եթէ կ'ուզեն որ իրենց
մտահոգութիւնը գիտնալով կրկնակի
չի տառապիմ:»

Հիւանդապահ կնոջ մը մասին խօս-
ուած է եղեր, յանձնարարեց որ ան-
միջապէս զրկուի այդ կինը: Յարդէ
գլխարկ մ'ալ տպուկեց, արեւին տակ
նստած ատեն գործածելու համար:

Ինչո՞ւ Աստուած իմ, այսքան զգա-
յուն, այսքան ազնիւ կին մը, այս-
քան տառապանքներու կը մատենս
արդեօք:

1 Մարտ 1903 Կիրակի

Քանի մը բարեկամներ Հելուա՛-
գացինք: Անշուշտ գացի Տիկին Սա-
թենիկը տեսնելու:

Շատ, շատ լաւ է, թէպէտ երէկ
բաւական ծանր է եղեր: Եղբայրն ալ
ներկայ էր:

Ձինք զուարթացնելու համար
խենթ խօսքեր ըրի. «Վա՛յ, ըսաւ.
խատօրէն, դո՛ւն ալ հա, դուն ալ: Իւ
կ'ըսէիր թէ պարապ ժամանակ չ'ունիս,
կարգալու համար: Լաւ որ չ'ունիս,
տես, մի քանի օր ազատ ըլլալուդ
պէս...» Եւ սկսաւ խրոտներ տալ,
հակառակ խօսած ատեն նեղուելուն:

Խղճի խայթ մը կ'զգամ անուղ-
ղակի կերպով մտահոգութիւն՝ մը պատ-
ճառած ըլլալուս համար:

Իմ տկարութեանս մասին հար-
ցուց և յանձնարարեց զգոյշ ըլլալ:
Այո, պիտի հնազանդիմ իրեն:

4 Մարտ 1903 Չորեքշաբթի

Պրն. Արգարեան իր քուղէնը և-
կա. Հէլուանէն շատ աղւոր լուրերով:
Իժիշկը 90 րո տարբերութիւն տեսած
է իր վիճակին մէջ, դէպի լաւը ան-
շուշտ:

Կիրակի պիտի երթամ մեկնելէ
առաջ, վերջին անգամ մ'ալ, վերջին

ին, գէշ բառ է. այսինքն անգամ մ'ալ
տեսնելու համար:

6 Մարտ 1903 Ուրբաթ

Սեռ, Սեռ, Սեռ Օր:

Ժամը ինն բժիշկէն վերադարձիս
բարեկամ մը կանչելով զիս, «Թէպէտ
տխուր է ըսելիքս, սակայն պէտք է
իմանաս, Տիկին Սաթենիկ մահաձերձ
է, քահանայ ուզած էին. Ղ. կուրացաւ»:

Շանթ ահարուած մնացի. Անձի-
շապէս ուզեցի երթալ Հէլուան, քրեկ
չի կար: Երեքին հազիւ հասայ: Կա-
յարանը քահանային հանդիպելուս
«Տիկին Սաթենիկը», դուչեցի իրեն վա-
զելով. — Մեռաւ, պատասխանեց...:

Մոմ մը սնալին վրայ, երկնցու-
ցած էին մահճին մէջ Ան... Ան ո՛չ
Ան, այլ մարմինը սնոր, մարմինը,
իր «Հոգւոյն քուրճը»:

Իողալով ներս մտայ սենեակէն ու
ծունիկի ինկայ: Հոն առանձին իրեն
հեռ, հաւատք մը ծնաւ սրտիս մէջ:
Զգացի, այս, թէ չ'էր մեռած Ան, թէ
բան մը կ'ապրէր իրմէ: Բա՛ն մը ո՛չ,
այլ այն որ ինքն էր, բուն ինքն էր, իս
հոգին: Այն ո՞ր սրտիս մէջ պիտի ապ-
րի միշտ:

Աղօթեցի... առանց բառի... իր
հոգիին...:

Ախ, տառապանքը իր եղբորը,
բոյրերուն, զաւակներուն, վերջապէս
ամէն անոնց որ կը սիրեն զայն: Քար
պէտք է ըլլայ Աստուծոյ սիրտը:

8 Մարտ 1903 Կիրակի

... վերջին անգամ տեսայ զին-
քը... Թաղեցինք...:

Թող չը վշտակրի հոգիդ, հրեշ-
տակ, եթէ լալով հեծելով, յանձնե-
ցինք հոգին, մնացորդներդ, քու սի-
րելիներուդ հոգիէն մաս մը տարիր:

հետդ: Իսկ քեզ սիրողներուն սրտին
մէջ պարապ մը թողուցիր սպ. պարապ
մը, որ յիշատակովդ միայն պիտի լե-
ցուի:

Բաւ էր որքան տառապեցար,
բաւ, ալ անկէ զերջ ապրէ՛ երանու-
թեան մէջ: Բեզի հանգիստ, մեզի դառ-
նութիւնդ քեզի անհուն երջանկութիւն
մը, մեզի վշտեր ու ցաւեր. քեզի ան-
մահութիւնդ, մեզի ալ մահը կեանքին:

Հանգիստ հոգիիդ:

ԵՐԿՐՈՐԳ ԵՆԻԿԱՅԱՅՈՒՄԸ

Հայկական նորակազմ թատերա-
խումբը խրատուսեալ այն մաս կենսապ-
րար քաջակերիչ ընդունելութենէն զոր
Ալեքսանդրիայի հայ գաղութը ըրաւ
իրեն իր անդրանիկ ներկայացման առ-
թիւ. յստաջիկայ կիրակի գիշերուան,
Մարտ 29ին, համար երկրորդ ներկա-
յացում մը կազմակերպեց է այն յԱե-
ստով որ այս անգամ ոչ միայն բազմ-
յական քաջակերիչներ, պիտաբնգուս-
նի, այլ միևնոյն ժամանակ պիտաւար-
ժանանայ աւելի լեցուն սրպէկ մը որ
զինքը կարող ըլլայ աճրապնդեք նաև
նիւթանկան տեսակէտով:

Առաջին ներկայացումէն ետքը
պէտք է անկեղծօրէն ըսել, ամենա
նոնք ոչ ներկայ գանուած էին, ո՛չ թէ
քննադատելու բան մը չէին գտած
կատարուած արարին նկատմամբ,
այլ քննահակառակը միայն գովեստներ
կը շնայէին յաջողութեանը մասին:
Արդ, այն գերասանները որոնք յաջո-
ղեցան այդ պատուաբեր գրուածութե-
նեղունք արժանի ըլլալ, իրաւաք ու-
նին այժմ յուսալու որ առաջին ներ-
կայացման գանուող հանդիսականները

ոչ միայն ամբողջովին ներկայ պիտի զտնուին այս երկրորդ ներկայացման, այլ պիտի շանան նաև իրենց հետ բերելու այն թերահաւատները, որոնք անցեալին մէջ տեղի ունեցած թատերական խեղդատակութիւններէն զրուած, այս անգամ կ'ասկածոտ զգուշաւորութեամբ մը չէին ուզած նոր յուսախաբուցիւններու ենթարկուիլ:

Կիրակի գիշերուան ներկայացուցիւր տրամն է «ՄԱՏՈՒՅՑ ԳՈՂԸ», յուզիչ յանկուցիչ տրամ մը, որուն մէջ մարդկային ամէնէն գերագրգռիչ կիրքերն ու զգացումները իրար կը բախին և որոնցմէ առաջ կուգայ բարոյականի մեծ դաս մը: Կրնանք ըսել որ «Մատույ Գողը» մին է այն հաշուազիտ տրամներէն որոնց յառաջ բերած ազդեցութիւնն ու յուզումը հանդիսականներուն վրայ ամենուրեքայն դասն է, զիրենք դէպի պարտաճանաչութիւն և դէպի բարոյականութիւն առաջնորդելու համար: Այս պիտի տրամներու շնորհիւ թատրոնը կը գագրի զբոսաւայր մը ըլլալէ և կը դառնայ դպրոց մը ուր ամէնէն չափահասներն ու ամէնէն փորձառուներն անգամ կրնան դեռ ռան սորվիլ:

Իսկ զաւելջոր... խելայեղ, չէն շուք խօշական ծիծաղներ ստեղծող կատակախաղ մը որուն առաջ բերելիք շունդաձայն ու ահագնագոչ քահքահներուն հազիւ պիտի կրնայ սոկալ Բիրամիտ թատրոնի փայտաչէն ձեղունը, մանաւանդ երբ այդ զաւելջոյն երկու գլխաւոր գերակատարները ըլլան Տ. Շաւարշ և Շիշմանեան:

Չմոռնանք նաև յիշել որ այս անգամ, միջնադարներու միջոցին, երաժշտութիւնն ալ պիտի չպակսի եւ մանաւանդ զուտ գեղարուեստական երաժշտութիւն մը պիտի ըլլայ դաշնակէ ջութակէ ու սրինգէ կազմուած որ անշուշտ հեշտութեան վայր-

կեաններ անցընել պիտի տայ: հանդիսականներուն» Այս է ըսել թէ սոյն երաժշտութեան յաջողութիւնը ապահոված է շնորհիւ Տ. Ալպանի որուն հսկայ... կարողութիւնը շոթակի մասին ծանօթ է պէտքուս: Ուրեմն ցտեսութիւն, կիրակի գիշեր, Բիրամիտի թատրոնը: Ե. Օ.

ՆԱՄԱԿ ԴԱՃԻՐԷԷՆ

Դահիրէ 1903 Մարտ 21

Սեմաքաւսի

Տիար Սեբաստ Բիւրատ Խմբագիր Քիւ-

նիկ» . . . Շարաթաթերթի

ՃԱՂԵՖԱՆԿՐԻՏ

... Բարեկամս

Ռուսաստանէն վտարեալ հայ գաղթականաց ի նպաստ զրկուելիք վերին Եգիպտոսի Մինիէից մեզ հասած հետեւեալ նուիրատուաց ցանկն ալ հրատարակել կը խնդրեմ, որ հաւաքուած է նախաձեռնութեամբ Մեծ. Ստեփան սղալի Յովհաննէսեան:

	Ղրշ. Ողջ
Նախորդ գումարը	2483, 75
Տիար Ստիւն. Յովհաննէսեան	292, 50
Տկն. Դուրվանդայ Գրիգորեան	200
Տիար Կարապետ Գրիգորեան	100
» Սեպուհ Թիւրապեան	100
» Հրանդ Ամատունի	50
Պ. Տիգրան Ս. Յովհաննէսեան	43, 75
Տիար Սեվակեքեար Կրպտեան	40
» Սարիմ Գանձեան	30
» Մկրտիչ Մելքոնեան	20
» Գէորգ Մազլուժեան	20
» Հարպոկրատ	10

» Յովհաննէս Թէլլաւան	10
» » Վառվառեան	10
Ընդհ. գումարը Արշ. Ողջ	3410,00

Այս հաշուով Մինիէէն ստացանք 9 1/2 ինն և կէս անգլիական ոսկի, որ Վրէտի Լիոնէ» չէքով մը պիտի փոխադրենք ի Թաւրէզ Միացեալ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան ի գործադրութիւն: Փափաքելի էր որ սոյն ամենակարեւոր հանգանակութեան մասնակցէին բոլոր Եգիպտոսի կարող հայեր, որոց կը խոստանամ իրենց ընտրած ծածկանուններով անգամ ստացադրեր բերել տալ, եթէ երբէք ուզողներ լինին որ իրենց անունները չը յիշուին:

Ի Կիւսակ հայ գաղթականութեան շնորհակալութիւնս յայտնելով նուիրատուաց,

Մնամ Ազօթարար
Ա. ՔՀՆՅ. ՇԱՂՅՅԵԱՆ

Ք Ր Ո Ն Ի Կ

Ռուսական Յայտարարութիւններ
Վրէննա ՁՂ Մարտ

Պերլինի Զայթի թղթակիցը հարցախուզած է ուսս գիւանագէտ մը, որ հետեւեալ յայտարարութիւններն ըրած է.

«Կայտնութիւնը միշտ ծանրակշիռ է Պուլկարիոյ կասկածոտ ընթացքին հետեւանքով, բայց Թաւրքիան քաղաք պրանշ պիտի ընդունի զսպելու համար ապստամբութիւնը: Ուրեմն ամեն բան կարգի պիտի դրուի, եթէ երբէք Ռուսիայէն ու Աւստրիայէն զատ սերիշ տէրութիւն մը չը ջանայ պլոտսը ջուրերու մէջ ձուկ սրտալ Պալգաններուն մէջ: Այս պարագային մէջ, Ռուսիան պիտի չը վարանի ձեռք դնել Պուլկա...

րիոյ վրայ ու նախ և առաջ գրաւել Վառնաի ու Պուրկազի նաւահանգիստները:»

Պիզմարք ու Քրիսթի

Հուովի ճիտեացէ տիրաշխութեթը՝ Քրիսթի եզօրորդի Բաւարիայի Քրիսթի ստորագրութեամբ և Մարտ 19ի թիւով կը հրատարակէ խիստ շահեկան ու անտիպ յիշատակներ, որոնք կը վերաբերին 1887 ին Ֆրիտրիխրուհի մէջ Պիզմարքի ու Քրիսթի միջև դարձած բանակցութեանց, Արևելեան հարցին նըկատմամբ.

Այս համբաւաւոր տեսակցութեան մէջ, կ'ըսէ Բայաւեկի Քրիսթի, Պիզմարք նախ յայտարարեց հօրեղբօրս — որ շատ վրդոված էր Ռուսիոյ դիտումներէն Արևելքի մէջ — թէ՛ ճարտարագիտական չ'էր ուզեր. թէ՛ պատերազմ ուզելով, ամեն պարագայի մէջ, պիտի չը փորձէր Պուլկարիոյ մէջ կորսնցընել իր բանակը, Աւստրիոյ ձեռքին տակ. իսկ ինք, յօժարեալամ թույլ պիտի տար Ռուսիոյ գրաւել Կ. Պոլիսը, որովհետև Ռուսերն այս կերպով աւելի դիւրահարուածելի պիտի ըլլային քան հիմակուան սահմանագրութիւններուն մէջ. կը վերջացընէ յայտարարելով որ՝ եթէ պատերազմը պայթի, Կերմանիան պիտի մասնակցի այն պարագային միայն երբ Ֆրանսան միջամտէ ի նպաստ Ռուսիոյ:

«Քրիսթի պատասխանեց Պիզմարքի, բարձրաձայն պնդելով թէ՛ Իտալիան երբէք պիտի չը հաւանի Ռուսիոյ թողուլ Կ. Պոլիսը, որ, անոնց ձեռքերուն մէջ պիտի ըլլար Միջեկրականի մէջ տիրապետութեան սքանչելի հիմ մը: Յայտարարեց թէ՛ ինք բացարձակապէս կուսակից է Թուրքիայի իրաքեաւս և Երոզղուքեաւս, որ միայն կրնայ արգելել Ռուսիոյ առաջխաղացութիւնը դէպ ի Լատինական ծովը.

պերճախօսօրէն խնդրեց Պիզմարքէ որ իրեն օգնէ Սուլթանին զօրութիւնը ամրացնելու Նանքին մէջ, կարգ հաստատելով անոր կայսրութեանը մէջ, որ կը քայքայուի բովանդակ Եւրոպային վտանգաբեր անիշխանութեան մ'երեսէն:

Պիզմարք ի վերջոյ համոզուեցաւ Քրիստի փաստերէն ու յարեցաւ Արեւելքի Սրաղու Քուօի և թուրքիոյ ամբողջութիւնը պահելու քաղաքականութեանը, որուն յարած էր արդէն Աւստրիան:

Բալամէնկի Քրիստի կ'եզրակացնէ թէ՛ Փրիտրիսրուհի մէջ հիմերը դրուած այս քաղաքականութիւնն է որ դեռ այսօր կը վարէ Արեւելքի մէջ երեք տէրութեանց ընթացքը:

Մակեդոնիոյ մէջ

Բարձր Քննիչ Հիլմի բաշան կը շարունակէ բարենորոգումները գործադրել, մինչդեռ միւս կողմէն, յեղափոխական հրոսախումբերը տենդոտօրէն առաջ կը տանին իրենց գործունէութիւնը. տիրող ընդհանուր կարծիքն է թէ Ապրիլին մէջ պիտի պայթի մեծ ապստամբութիւնը, որ արդէն տեղ տեղ, մանաւանդ Մանասթրի լեռնոտ մասերուն մէջ սկըսած է: Ալբանացիները կատղած են Հորիզոնը շատ ամպոտ է:

Պուլկարիոյ մէջ

Նախարարական տագնապը դեռ կը շարունակէ. Փէրոինանա իշխանը շուարած է. Սօֆիայէ կը հեռանայ յաճախ, մայրաքաղաքին մէջ ինքզինք ապահով չը դգար, ու իրաւունք ալ ունի. բանակին մէջ զժգոհութիւնը զենիթը հասած է, Տանէֆի և համախոհներուն դէմ Իսկ Տանէֆի կրթնած է Ռուսիոյ ու իր ծայրայեղօրէն խաղաղասիրական — կեղծ թէ անկեղծ — ձգտումներուն:

«LES LUSIGNANS», Պրանսերէն գեղեցկատիպ գրքոյկիս երկասիրողն է Տիար Արմենակ Հ. Ալաատան, ապագայ խոստացող երիտասարդը: Թերթիս ծաւալը չը ներեր երկայնօրէն զբաղիլ այս գրքոյկին հրատարակութեան շարժառիթովը. գրական արժէքին, ոճին, ևն, ի մանրամասնութիւններովը: Լաւ է որ ամեն ֆրանսագէտ Հայ ունենայ անկէ:

Արտ. 10

ՊԱՏԿԵՐԱԶՍՐԴ ՎԱԶԳԷՆ — ԵՐԿԱՐԱՆ

Մեծ զեղչով պիտի ծախուի 600 մեծագիր երեսներէ բաղկացած սոյն ընդարձակ երգարանը, իր մէջ կը պարունակէ բոլոր հին ու նոր երգերը և 10ի չափ նշանաւոր բանաստեղծներու պատկերներ և կենսագրականներ: Գինն է, ճամբու ծախքով միասին, Տուար 1. 15. Եւրոպայի համար 5 ֆրանք, Պարսկաստանի համար 4 ֆրանք:

Դիմել՝ K. KHORENIAN
P. O. B. 379 LYNN, MASS.

Տ. Փանոս Խաւրիկեան, Աղեքսանդրիա. Ութիպ բաշա փողոց
Տ. Գ. Կազանչեան, Գահիրէ. Ապտին

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն անասկ տպարդրուէն գործեր կը կատարէ մեծ խնամով եւ ինչ որ նուազ կարեւոր չէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳԵՆԵՐԱՆՈՎ,

Ա. ՉԿԵՐ

Անգլիերէնի մասնաւոր դասեր
աւանդողը — որուն Քանուցումը ժա-
մանակէ Տ'ի վեր կը հրատարակուի
Փիւնիկի մէջ — կը շարունակէ իր դա-
սախօսութիւնները Պէտլիճի մէջ-
նուր հիմայ ունի բաւական թիւով աշակերտ-
ներ. կը խոստանայ շարաթը միայն 4
անգամ դաս առնողին սովորեցնել 5-6
ամսուան մէջ գրել, կարգալ ու խօ-
սիլ:

Մանրամասնութեանց ու պայման-
ներուն համար դիմել Փիւնիկի խմբա-
գրութեան:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մէնչիյէյի հրապարակը, Բասաթ
Բրէնս Սէյֆէտտին պէյ, թիւ 50 խօ-
նութիւն:

Ամեն տեսակ արեւելեան կերա-
կուրներ, և անուշեղէններ, մասնաւո-
րաբար Տեօնէր եւ Շիշֆէպապի:

Այս ճաշարանի վարիչներն են
Տեարք Կարապետ Տիրհէմեան
և Սարգիս Հիւսէյինճեան

Բաժանորդագրութիւն կ'ընդուն-
ուի դիւրամատչելի պայմաններով,
կանխիկ վճարումով: Գիներուն չա-
փաւորութեամբը կրնայ մրցիլ օտար-
ներու նման հաստատութեանց հետ:

Մինչև ցարդ հոն յաճախող պատ-
ազգայիններուն հետզհետէ անոյ թիւը
պերճախօս վկայութիւն մ'է արդէն
սոյն ճաշարանին մէկէ աւելի առատի-
ւութեանցը:

Յաճախեցէ՛ք Արեւելեան ճաշա-
րանը:

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՁԻ

Անգլիերէն հոյակապ երկին կա-
րէր մասերուն ամփոփումը, հայերէնի
թարգմանում, գեղեցիկ հատոր մը,
157 էջերով՝ հեղինակին պատկերով
ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ.
Տոկայեանս: Գինն է 3 Քրանդ:

Գիմել:

Mr. Donabedian

177 Godolphin Road

Shepherd's Bush

London.W.

ՏՐ . ՍՍՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեալ բժիշկ

Սեուսքրիս փողոց թիւ 1

«Ճար ս'Մ. շէֆսանսրի»ի սպարանին

վրայ ի Ս. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան
պատիւ ունի ծանուցանել Տեղիս ար-
գոյ հասարակութեան թէ՛ ինք հաս-
տատուած է վերջնապէն քաղաքիս մէջ
ու պատրաստ է դարմանելու ընդհա-
նուր հիւանդութիւններ: Մասնագի-
տօրէն ու Ամերիկայի կատարելագոր-
ծուած ու նարագոյն բժշկական փոր-
ձերով ու սխորեւոյ կը բուժէ մանա-
ւանդ արեան վերաբերեալ զանազան
ախտերը:

Հիւանդները կ'ընդունուի ամեն օր
կէս օրէն հարը ժամը 2-5. Իսկ Չո-
րեքշաբթի եւ Շարաթ օրերը առտուան
ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ ի-
րեն գիմուղ աղքատ հիւանդները: